ԹԱՂՄԱՆ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՐԱՋԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թաղման ծեսը մարդկության պատմության բոլոր փուլերում, բոլոր ժողովուրդների համար եղել է կենցաղային ամենատարողունակ սովորություններից մեկը՝ ծիսական արարողությունների քանակով, հասարակական ու ժամանակային ընդգրկումների ծավալով: Համապատասխանելով ժողովրդի աշխարհայացքի, ըմբռնումների, կենցաղի հարահոսքին, այն երբեք չի կորցրել իր մեծ դերն ու ազդեցությունը մարդկային կյանքի, հոգերանության ու մտածելակերպի վրա:

Թաղման հնադույն սովորությունների մասին տեղեկություններ են հաղորդում նյութական մշակույթի այլևայլ դրսևորումների մեզ հասած մասունքները. ժայռապատկերներ, սեպագիր արձանագրություններ, քանդակներ, ճարտարապետական հուշարձաններ և, իհարկե, առաջին հերթին դերեզմաններն ու հայտնաբերված բազում դամբարանադաշտերը:

Նախամարդը մահացած մերձավորին թողնում էր իր մշտական բնակավայրում՝ քարանձավում կամ կողքի քարայրում, իսկ հետզհետե անցավ նրա համար այլ, առանձին բնակարան պատրաստելու մտքին: Թաղման բոլոր հնադույն ձևերը՝ քարարկղային, սալարկղային, հիմնահողային, կարասային, կավե ու փայտե դագաղային, համոզում են մեզ, որ մահացածին երբեք չէին համարում ապրելուց վերջնականապես զրկված, գտնում էին, որ նա շարունակելու է կյանքը այլ աշխարհում: Քնի և մահվան նմանություններից ու երազների, տեսիլների անըմբռնելիությունից են ծագել հոգեպաշտական պատկերացումները: Ըստ նախնական մտածողության, մահացածը, որի երկրորդ «ես»-ը կամ հոգին լքել է ոչ թե ժամանակավորապես, այլ ընդմիշտ (կամ շատ երկար ժամանակով), կենդանի մարդկանց համար աննկատ շարունակում է իր գոյությունը, դրա համար աշխատում էին նրան ապահովել անհրաժեշտ բոլոր պիտույքներով, անգամ ընտանի կենդանիների ու մերձավոր մարդկանց ընկերակցությամբ: Դա են ապացուցում գերեզմանների պեղումներն ու գրավոր աղբյուրները[1]: Աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդները հոգատարություն են ցուցաբերում մեռած նախնիների նկատմամբ[2]:

Թաղման ծիսակատարության բուն նպատակն է դոհացնել, հաճույք պատճառել հանգուցյալի հոգուն: Ինչպես չհասկացվող, անբացատրելի, մանավանդ զորեղ, անդիմադրելի ու անհաղթելի յուրաքանչյուր երևույթի, այնպես էլ մահվան ու հանգուցյալի հանդեպ, մարդը երկյուղ է

---

1 Ե. Լ ա լ ա յ ա ն. Ծիսական կարգերը հայոց մեջ, ըստ Սպենսերի. Ա պրակ. Թիֆլիս, 1913, էջ 53:

2 Տե՛ս Э. Б. Т а й л о р. Первобытная культура, М., 1989.

տածում: Վախենում է, որ ամեն ինչ տեսնող ու լսող հոգին դժգոհ կմնա ու վրեժխնդիր կլինի: Եվ երկրորդը՝ մարդը սիրում ու խղճում է իրենից ընդերկարս բաժանվող մերձավորին և իր հոգու ու խղճի պարտքն է համարում անել նրա համար հնարավորը:

Թաղման առաջին ձևերի ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ հոգեպաշտության նախնական տարրերը դոյացել են դեռևս հին քարեդարյան ժամանակներում, առավել կոնկրետացել նոր քարե դարի շրջանում, անցել բրոնզե դարերի միջով և երկաթե դարում արդեն ստացել կրոնական համակարգի պատկեր:

Հազարամյակներ շարունակ զանազան կերպ էին վարվում դիակների հետ. մումիաներ էին պատրաստում, թաղում կամ հրկիզում էին, հիմնականում ցուցաբերելով երկու տարբեր մոտեցումներ՝ պահպանել կամ ոչնչացնել, բայց երբեք անուշադրության չէին մատնում:

Բնական է, որ կենդանի մարդը, ունենալով իր աստվածները, պահապան զորությունները, հոգացել է նաև հանդուցյալների մասին, ստեղծել նրանց աստվածը. Սպանդարամետ, Հադես, Նարդիլ, Սերապիս, Թանատոս և այլն: Մարդկանց հոգին առնելու և նրանց մահվան աշխարհ տեղափոխելու համար ևս ժողովուրդը հատուկ պաշտոնյաներ էր ընտրել. Գաբրիել հրեշտակապետ, գրող, հոգեառ: Դժոխքում իշխում էին Շահապետը, Սադայելը, Սատանան, Սռնակը՞ և այլն, որոնք երբեմն ակնարկվում են ժողովրդական սգո երգերի մեջ.

Մեր պախճանտին բուսեր մանտրտիկ խամիշ,
Գրող, անորդի է, մի աներ խմիշ:
Մ'աներ, դրոդ, մ'աներ, խակ է տերևը,
Ալվա զարկիր տարիր կանաչ արևը[4]:

Նախամարդը, որ ավելի վարժված էր իր զգացումներն ու վերաբերումներն արտահայտել շարժումներով ու ձայնարկություններով, քան սառը, անկիրք խոսքով, յուրաքանչյուր նշանակալից երևույթի արձագանքում էր որևէ արարողությամբ. արևի ծագմանն ու խավարմանը, փոթորկին ու կարկուտին, բերքի հասնելուն ու բնության փթթմանը, պատերազմին ու արհավիրքին... նաև մարդու ծննդյանն ու մահվանը:

Հավանաբար, մարդը առաջին ողբերգությունն ապրել է արևն ընդմիշտ կորցնելու վախից: Նա երկյուղել է, որ չար ուժերը ամպի, հողմի, սառնամանիքի, մթի տեսքով կարող են խափանել արևի աշխարհ գալու ցանկալի իրողությունը և աշխարհը թողնել խավարի ու պաղության մեջ: Արևը եղել է մարդու ցնծության ու տխրության արարող, նրա դոյությունն ապահովող ամենազոր ուժը: Բարձրադիր արևահայաց վայրերում կառուցվել են արևին նվիրված տաճարներ, նրա ծագումը դիմավորել են պարով ու աղմուկով, հեղել են մատաղացու անասունի, նաև մարդու արյուն: Իսկ արևամուտն ու խավարումը ուղեկցել են ողբով ու ճիչերով,

3 Ղ. Ա լ ի շ ա ն. Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց. Վենետիկ, 1895, էջ 416:

4 Հ. Ճ ա ն ի կ յ ա ն. Հնություններ Ակնա. Թիֆլիս, 1895, երգ 55:

բզկտելով սեփական մարմինը: Արեի մահվան ու ծննդյան հավերժական երևույթները մարդուն համոզել են, որ մեռած մարդը, որին նույնպես հալածում են չար ուժերը, արևի նման կարող է կենդանանալ: Արեը դնում է ուրիշ աշխարհ և վերադառնում, մարդն էլ դնում է ուրիշ աշխարհ և երբևէ կվերադառնա: Արևը մեռնում է, աշխարհը խավար է հագնում, մարդը մեռնում է՝ անհրաժեշտ է սև հագնել. այստեղից է համարյա բոլոր ժողովուրդների համար ընդհանուր ծդո սև դույնը: Որոշ ազգերի մոտ պահպանվող նախնական սպիտակը (որը, ի դեպ, կա նաև հայերի մոտ. եկեղեցու պաշտոնյաներին ու թագավորներին ճերմակազգեստ թաղելը) դարձյալ պետք է բացատրել արեգակ–խավար, ցերեկ–դիշեր, լույս–մութ զուգորդումներով:

Մեր կարծիքով, դիակի հետ վարվելու երկու հիմնական եղանակներն էլ՝ թաղումը և այրումը, կապվել են արևի պաշտամունքի հետ: Յուրաքանչյուր օրվա վերջում արևը անցնում է գետնի տակ (տեսողական պատրանք) և առավոտյան նորից ծագում: Մեռած մարդուն պետք է տանել գետնի տակ, որ կրկին հառնի: Թազման հանդեսները կատարվում էին և են մինչև արևի մայր մտնելը, հիմնականում արևին ի տես, արևամուտից հետո յուրաքանչյուր արարք անիմաստ էր դառնում:

Անտարակույս կողբային նրանք մինչև արևամուտ,
Եթե Աքիլլն Ադամեմնին մոտենալով չասեր նրան...[5]

«Այս ոչ հաճախ հանդիպող սգերգի տիպը պատկանում է այսպես կոչված «զորի»-ների, որոնք երգվում են կանանց խմբի կողմից վաղ առավոտյան արևածագից առաջ... առաջին օրը թաղումից հետո»[6]: Այստեղ խոսքը վերաբերում է հատկապես արշալույսին երգվող սգո երգերի ժանրի գոյությանը, որը վկայում է թաղման արարողությունների մեջ արևի խաղացած մեծ դերի մասին:

Որոշ գիտնականներ (Յու. Վ. Գոթե, Խ. Սամուելյան) գտնում են, որ դիակիզումը կոչված է մարմինը վառելով, արագացնել հոգու անջատումը նրանից և հոգուն վախեցնելով փախցնել շատ հեռու՝ զգուշանալով նրա գործելիք չարիքներից՝ հատկապես, որ թաղման գրեթե բոլոր ձևերը նույնպես ընդգրկում են հանգուցյալի վերադարձը խափանող միջոցներ՝ ապահովելով ողջերի անվտանգությունը: Մեզ առավել հավանական է թվում, որ գիակը հանձնում էին արևը խորհրդանշող կրակի սրբազան զորությանը: «Իլիականում» նկարագրված է Պատրոկլեսի դիակիզման հետաքրքիր տեսարանը. Աքիլլեսը երգվում է չլվանալ գլուխը մինչև բարեկամին չայրի «հրով ամենասուրբ»:

Դիակիզումը գոյություն է ունեցել հին աշխարհի շատ ազգերի՝ հույների, հռոմեացիների, խեթերի և այլոց սովորությունների համակարգում: Դիակը վառում էին նրան պատկանող բոլոր անձնական իրերով, ա-

---

5 Հ ո մ ե ր ո ս. Իլիական. Երևան, 1987, երգ 23:

6 Т. С в е ш н и к о в а. Волк в контексте румынского погребального обряда. Исследования в области балто-славянской духовной культуры. Погребальный обряд, М., 1990, с. 129.

նասուններով հանդերձ: Հայաստանում դիակիզում հանդիպում է վաղ, միջին և ուշ բրոնզեդարյան, վաղ երկաթի դարաշրջաններում. լայնորեն տարածվել է նաև հելլենիստական դարաշրջանում: Այդ վերապրուկները պահպանվել են մինչև վերջերս՝ գերեզմանին վառվող կրակի եղանակով: Այդ հիշողությունը պահպանվել է ժողովրդական սգո երգերում.

Գացեք փատ ու փուշ բերեք,
Անորդի մարիկն երեցեք:
Երեցեք մոխիր արեք,
Մոխիրն հովուն տվեք, ուր տանի:

Հայ ժողովուրդը արևը նույնացնում է կյանքի հետ. դրա ապացույցն են բազմաթիվ հին ու նոր ասացվածքները, արտահայտությունները, երդումները, անեծքներն ու օրհնանքները. զարև հատանել, յարևէ արկանել, արևպետ վախճանեալ, արևդ սիրես, արևիդ մեռնեմ, կարմիր արևից ընկած, իմ արև, արևը խվարեց, արևի երես չտեսնես, արևդ թաղեմ, արևդ մեռնի, էրկեն արև էղնիս և այլն...: Այս առումով բնորոշ բացատրություն է տալիս Վ. Տեր-Մինասյանը իր մեջբերած տապանագրին.

«Յիսուն ամ ողջունեցի զարև մարդոց,
Իսկ արդ ողջունեմ զարև Աստուծոյ:

Արևի այսօրինակ հիշատակությունն այսքան դերաթռիչ երևակայությամբ, ի հեթանոսության արևապաշտ և ի քրիստոնեության արևասեր հայ մտքի միայն հատուկ է »[7]:

Հայկական աղոթքներն ու շարականները բազմիցս դիմում են արդակին, հեքիաթները լի են արևի խորհրդանշային կերպարներով: Հայաստանի որոշ շրջաններում տակավին պահպանվում է թաղման հաջորդ օրը արևածագը թարմ գերեզմանի մոտ դիմավորելու սովորությունը (այդ): Արևից զրկվելով ու արև կորցնելով, դարձյալ հանգուցյալները ժողովրդի հոգածությամբ անարև չեն մնում. վերջալույսը՝ թույլ ու աղոտ, անուժ ու անօգնական, «մեռելի փայ արևն ա»:

Հուղարկավորության ծեսի ամենավաղ նկարագրությունները համընկնում են հայոց գրավոր գրականության ու պատմագրության արշալույսի հետ և արտացոլվում V դարի պատմիչների երկերում[8]:

Մ. Խորենացու մեջբերած Արա Գեղեցիկի ավանդազրույցը բացահայտում է մահվան հետ կապված մի քանի հավատալիքներ: Առաջինը գիակի վերակենդանանալու հնարավորության հավատն է, որ առաջ է բերել առլեզների մասին պատկերացումները, որպես չան սլաշտամունքի մի դրսևորում: Առլեզներին հիշատակում են նաև Փ. Բուզանդը, Ե. Կողբացին, Դ. Անհաղթը: Շունը մարդու ամենամերձավոր ու հավատարիմ կենդանին է , որը համարվում էր մարդկային հոգի կրող, և պատահական չէ,

7 Վ. Տ ե ր - Մ ի ն ա ս յ ա ն. Անգիր դպրություն և առակք. Կ. Պոլիս, 1893, էջ Ծե:

8 Մ. Խ ո ր ե ն ա ց ի. Հայոց պատմություն. Երևան,1940, էջ 33:

որ հենց նրան է վսահվել վերքերը լիզելու, հոգին մարմնին վերադարձնելու ոչ դյուրին գործը: Շամիրամը հավատում և հավատացնում է, որ իր վերնատանը դրված Արայի դիակը կկենդանանա: Այսպես, Մուշեղ սպարապետի վերակենդանացմանը հավատում էին նրա հարազատները, և դիակը դնելով աշտարակի տանիքի վրա՝ սպասում առլեզների այցելությանը: Բասը ստուգաբանվել է որպես առող և լզող, հար լզող, Արային լիզող, քաջ այրերին լիզող. մեզ ավելի հավանական է թվում վերջինը[10]:

Խ. Սամուելյանը վկայակոչում է մի սովորություն, ըստ սրի Վանի Լեղք գյուղի Ամենափրկիչ եկեղեցու տեղում կանգնեցված կուռքի առջև մարդիկ շներին լիզել էին տալիս իրենց վերքերը[11]: Ս. Հարությունյանը, հանգամանորեն քննելով շանն աղերսվող հավատալիքները[12], բերելով հնդկական, հունական, գերմանական, իրանական և այլ առասպելների փոխառնչությունները, բացահայտում է, որ դրանք առավելապես կապվում են թաղման ծիսակատարությունների և հանդերձյալ աշխարհի մասին եղած պատկերացումների հետ: Շունը հանդես է գալիս մերթ իբրև հոգնառ, հոգեկիր, հոգիների առաջնորդ, հոգին մարմնից անջատող, մերթ՝ հոգին մարմնին վերադարձնող: Շան դերի այսօրինակ բմբռնմանը չի հակասում ո՛չ Արտավազդի շղթաները կրծող և նրան ազատություն բերել ձգտող շների առկայությունը մեր դիցաբանության մեջ, ո՛չ էլ գերեզմաններից դուրս ելած մեռելների (դոռնավշտիկ, դոռնադաբ, խորթլաղ) շան կամ գայլի կերպարանքով շրջելու սնահավատքը:

Մահվանն առնչվող մյուս հավատալիքը, որի անդրադարձը կա Արա Գեղեցիկի զրույցում, արյան վրեժի հասկացությունն է: Հայոց զորքը պատրաստվում է նորից պատերազմելու՝ Արայի մահվան վրեժն առնելու համար: Ղևոնդ պատմիչը ևս դարեր անց այսպիսի դրվագ է դրի առել[13]: Արաբների դեմ մղած ճակատամարտում Աահակ և Համազասպ Արծրունի եղբայրների զոհվելու լուրն առնելով, երրորդ եղբայր Գագիկը այլ նախարարների հետ վայով ու ճիչով հասնում է ռազմադաշտ՝ վրեժ առնելու նրանց մահվան համար: Արծրունյաց Դերենիկ իշխանի այրին երդվում է արևի երես չտեսնել, մինչև որդիները չմեծանան ու չառնեն հոր սպանության վրեժը[14]: Ժողովուրդը այժմ էլ շարունակում է հավատալ, որ սպանվածի հոգին չի հանգստանա, մինչև նրա արյան վրեժը չառնվի:

Երրորդ հավատալիքը, որի հիշողությունը առկա է Արա Գեղեցիկի զրույցում, առնչվում է քննարկվող թեմային և վերաբերում է Շամիրամի քար դառնալուն: Հոգու հեռանալուց հետո մարմինը դարձել է քարարձան: Նման զրույցներով հարուստ է հայկական ավանդապատումը, պատմական Հայաստանի տարածքը լի է սրբազան քարերով, որոնցից յուրա-

---

9 Փ. Բ ո ւ զ ա ն դ. Հայոց պատմություն. Երևան, 1987, V գլր., գլ. ԼԶ:

10 Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Արմատական բառարան. Երևան, 1971:

11 Խ. Ս ա մ ո ւ ե լ յ ա ն. Հին Հայաստանի կուլտուրան. հ. Ա, Երևան, 1941, էջ 190:

12 Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մի դրվագ հայ առասպելաբանությունից.– «Պատմա-բանասիրական հանդես», 1989, №1, էջ 157–167:

13 Ղ և ո ն դ. Պատմություն. Երևան, 1982, էջ 107:

14 Թ. Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն. Պատմություն Արծրունյաց տան. Երևան, 1985, էջ 413:

քանչյուրը պարուրված է սրտահույզ պատմություններով: Այս հավատքի հետ է աղերսվում մահարձան կանգնեցնելու սովորությունը:

Իմ բախտն էլ քար էր, ինչ էնեմ,
Քուր ջան, ինչի գառար լեռ քար,–

ողբում է քույրը վաղամեռիկ քրոջը[15]*:*

Ժամանակագրական առումով թաղման ծեսի մասին երկրորդ հիշատակությունը, որ ուղեկցվում է կենցաղային պատկերներով, վերաբերում է հայոց Արտաշես հզոր արքային[16]*: Մ. Խորենացին ներկայացնում է նրա հուղարկավորության մանրամասները: Ոսկեհուռ գագաղի մեջ արքայի մարմինը ծածկված է ոսկեզօծ շղարշներով, առջևից պղնձե փողեր են հնչեցնում, ետևից գնում են ձայնարկու կույսեր ու լալկան կանայք, ապա, ըստ նախնյաց կարգի, քայլում են որգիները, ազգականների բազմությունը, սրանց հետևում են ազգի նահապետները, նախարարական գնդերը, զորականների վաշտերը՝ բոլորը զինված, ինչպես պատերազմի ժամանակ (գարձյալ գործ ունեին թշնամու հետ, որը խլել էր իրենց թագավորին) և ամենավերջում՝ ռամիկների բազմությունը: Դագաղի ետևից՝ ըստ հանգուցյալին մերձավորության աստիճանի, համապատասխան հերավորությամբ քայլելու սովորությունը պահպանվել է մինչև այժմ: Պատմահայրը նշում է, որ նրա կանայք, հարճերը, մտերիմ ծառաները ինքնազոհաբերում էին կատարում: Ըստ երևույթին այս սովորությունը պահպանվել է նաև հեթանոսության վերացումից հետո՝ հետզհետե կրելով քրիստոնեական նահատակության բնույթ*[17]*: Հետագայում կենդանի մարդկանց փոխարեն հանգուցյալների հետ թաղում էին քարե արձաններ:*

Արտաշեսի մասին եղած գողթան երգերի շարքում կան երկուսը, որոնք առանձնապես հետաքրքրում են մեզ: Առաջինը որդու՝ Արտավազդի հետ ունեցած երկխոսությունն է.

Մինչ գու գնացեր,
Եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
Ես ավերակաց ում թագավորեմ[18]*:*

Այնքան մարդիկ և հարստություն թաղվեցին հոր հետ, որ նրան հաջորդող որդին մի պահ մոլորվեց, զայրացավ ու ընդվզեց մահացող հոր դեմ: Ավելի հետաքրքիր է, որ մահացող հայրը նրան պատասխանեց անեծքով[19]*: Կասկածի ենթակա չէ, որ գողթան երդերը բարձրարվեստ գրական ստեղծագործություններ են, և որ գողթան երգիչը կարող էր հորինել հետագայում մեռած արքայի անունից: Բայց և բացառված չէ, որ անեծք-հատվա-*

---

15 Ռ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Գեղարքունիք.– «Հայ ազգագրություն և բանահյուսություն». պր. 14, Երևան, 1983, էջ 88:
16 Մ. Խ ո ր ե ն ա ց ի, էջ 128:
17 Մ. Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի. Պատմություն Աղվանից աշխարհի. Երևան, 1969, էջ 8:
18 Մ. Խ ո ր ե ն ա ց ի, էջ 128:
19 Նույն տեղում, էջ 129:

ծր հորինվել է հենց Թաղման հանդեսի ժամանակ, եղերերգակ գուսանի կողմից:

Թաղման հեթանոսական հանդեսի ժամանակ երգող-պարողներից մեկը՝ հանգուցյալի դիմակով ու հագուստով կատարում էր նրա դերը: Օ. Մ. Ֆրեյդենբերգը գրում է, որ հուղարկավորության ըեմական մասում, երբ դերասանները հանգուցյալի մոմե դիմակներով կանգնած են դիակառքի վրա և իրենց շարժուձևով ու նշաններով պատկերում են այդ հանգուցյալին:

Սրա վերապրուկները կան մինչև մեր օրերը. XIX դարի վերջերին Սասունում կանայք դագաղի ետևից ձեռքներին խաղացնելով տանում էին հանգուցյալի շորերը, դրանք դնում էին գերեզմանում, իսկ այժմ դագաղի գլխավերևում դնում են մեռածի լուսանկարը և հաճախակի դիմում նրան. ողբասաց կանանցից որևէ մեկը պատասխանում է մյուսների կողմից մահացածին տրվող բազում հարցերին ու դիմումներին:

Բոլոր ծեսերն ուղեկցվել են պարով, այն իր անվիճելի տեղն ուներ նաև Թաղման ծեսի արարողակարգում: Այս բնույթի պարերի մասին հաղորդում է Փ. Բուզանդը, պատմագրելով, որ Ներսես Մեծի մահից հետո ժողովուրդը նորից դարձավ Թաղման հեթանոսական ծեսին. կոծում էին, ճիվաղային սլարեր պարում՝ դեմ առ դեմ միմյանց ծափ զարկելով[20]:

Ինչպես սգո երգերը ունեին իրենց հատուկ կատարողները, այնպես էլ սգո պարերը կոծատեղիներում կատարում էին կոծապարողները կամ ծեծկվողները: Այս պարերը բաղկացած էին բացառապես դեպի ձախ և ետ տանող քայլերից, աչքի էին ընկնում ողբերգաշունչ շարժումներով, զգայական լարվածությամբ, տրորվելու, օղիկ-օղիկ լինելու կեցվածքներով[21] : Կոծապարերի իրողությունը վկայում են նաև սգո երգերը: Այսպես, ծովում խեղդամահ եղած երիտասարդ Արշակին նվիրված սգո երգում սգապարի կոչ է արվում նրա կնոջը.

Շորորա, Սալաթ, շորորա,
Նավակն Արշակին կօրորա[22]:

Հ. Մանդակունին Թաղման հեթանոսական հանդեսը համարելով անառակ, հանցավոր ծես, և անկասկած, բազմիցս ներկա լինելով այդօրինակ արարողության, մեկ առ մեկ Թվարկել է բոլոր անպատշաճությունները[23]: Հուղարկավորության հեթանոսական ծեսի մասին բոլոր տեղեկությունները մեզ են հաղորդել քրիստոնեության սպասավորները, որոնք ձգտում էին վերացնել հեթանոսության բոլոր ավանդույթները, և, բնականաբար, ամեն ինչ ներկայացնում են բացասական տեսանկյունից: Տիեզերական եկեղեցական ժողովները այս սովորությունները վերացնելու համար պար-

20 Փ. Բ ո ւ զ ա ն դ. V դպր., գլ. ԼԱ:

21 С. Л и с и ц и а н. Армянские старинные пляски. Ереван, 1983.

* Արցախի Աչան գյուղի մի քանի տարեցներ և ըանահավաք Լ. Հարությունյանը պատմում են, որ 1919,1922 և 1938թթ. գյուղում տեղի են ունեցել անհատական և հանրային կոծապարեր (անձնական արխիվ):

22 Մ. Թ ո ւ մ ա ճ ա ն. Հայրենի երգ ու բան. հ. 3, Երևան, 1986, էջ 299:

23 Տեառն Յովհաննու Մանդակունւոյ հայոց հայրապետի ճառք. Վենետիկ, 1860, Թուղթ Մխիթարութեան վախճանելոց յաչխարհես:

բերաբար զանազան միջոցառումների են դիմել, հատուկ կանոններ մշակել: Կոծողներին պատիժներ են սահմանել նաև Ներսես Մեծը, Գրիգոր Լուսավորիչը, Սահակ Պարթևը և հայ եկեղեցու մյուս բոլոր մեծերը[24]:

Փ. Բուզանդի նկարագրած Գնելի մահվան սեսարանը ծանոթացնում է մի շարք մանրամասների՝ ա. կոծին պետք է մասնակցեին հանգուցյալին ճանաչող բոլոր մարդիկ: Արշակ թագավորը հրամայում է բոլորին գնալ և կոծել «ոչ ոք չհամարձակվի ետ մնալ»[25]: Այժմ էլ, ոչ միայն մտերիմ, այլև անգամ հեռավոր ծանոթի հուղարկավորությանը մասնակցելը հոգու պարտք են համարում: Այսպես էր նաև Դերենիկ իշխանի մահվան պարագայում[26]: Ազգականների ու տիկինների հետ սգում էին բոլորը, արհեստավորներն ու աշխատավորները ձեռքերը ծնկներին գրած լալիս էին, իշխաններն ու ազատներն ողբի խոսքեր էին ասում: բ. Գնելի գագաղի մոտ Փառանձեմը բարձր ճչում էր, Ասֆի տիկնոջ ապարանքից լսվում էին բարձրաձիչ աղաղակներ: «Ամբողջ երկիրը միատեղ վայնասունով լցված ողբում էր իշխանին կականալիր ու սաստիկ գոռում գոչումով»,— նկարագրում է Մ. Կաղանկատվացին Ջիվանշիր իշխանի մահը[27]: Ժողովուրդը մահվան առաջ բերած ողբերգությունը հուզական, զգացմունքային գրսևորումները անվանում է կական, շիվան-թափան, վայնասուն (վինավսի), գուշակռինչ և այլն: Այժմ էլ գյուղական վայրերում թաղման արարողությունը ուղեկցվում է անսովոր բարձր կանչերով: դ. Փառանձեմը փետում է մազերը, սուգ անող Սոֆի տիկնոջ ապարանքից լսելի էին կուրծք բախելու, ճակատին հարվածելու ձայներ: Մազերը փետում է նաև Հեկտորի մայրը՝ «Իլիականում», իսկ Աքիլլեսը կտրում է իր գանգուրները և գնում մեռած Պատրոկլեսի ափում[28]: Ինքնախարազանման այս և Հ. Մանգակունու նշած այլ ձևերը շարունակում են սիրեցյալի հետ կամավոր մահանալու ցանկություններ արտահայտել: Նույն իմաստն ունեն նաև գլխին հող ու մոխիր լցնելու սովորությունները[29]. առաջինը որպես հետը թաղվելու, իսկ երկրորդը՝ վառվելու ծեսի վերապրուկ: Մազերին առհասարակ վերագրում են մոգական հատկություններ (հեքիաթներում մազը կրակին տալ, գլխին կախարգական մազի առկայությունը, մազի միջոցով գիր անելը և այլն): Ի դեպ, մազի սլաշտամունքը ևս իր հիմքում ունի արևապաշտությունը՝ բխում է վարսերի նմանությունից արևի ճառագայթներին: Կանայք հանուն սիրեցյալ ամուսնու, որդու կամ եղբոր հրաժարվում էին իրենց գեղեցկությունն ու պարծանքը կազմող հյուսերից, տղամարդիկ կտրում էին մորուքները: Մինչև վերջին ժամանակներս առկա էր ողբերգության առթիվ ծամը կտրելու սովորությունը (Սասուն, Մուշ, Բուլանըխ): Երևույթի խոսքային արտահայտությունները ավելի երկար են պահվում լեզվական կտրվածքներում, առանձնապես նրա բարբառային շերտերում. ծամկդրուկ, վարսդ կտրեմ, անմազ մնաս և այլ ա-

24 Փ. Բ ո ւ զ ա ն դ. III գպր., գլ. ԺԳ:
25 Նույն տեղում, էջ189:
26 Թ. Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն, էջ 412-414:
27 Մ. Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 175:
28 Հ ո մ ե ր ո ս. Նշվ. աշխ., երգ 23:
29 Տե՛ս Ղ. Փ ա ր պ ե ց ի. Հայոց պատմություն. Երևան, 1982, էջ 277, Մ. Ո ւ ռ հ ա յ ե ց ի. Ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898, էջ 356:

նեծքները արտահայտում են դիմացինի, նրա հարազատի մահվան ցանկությունն:

Ինչքան մեծ էր մարդու հռչակը, նշանակալից ու ծավալուն նրա արածն ու թողածը, այնքան հարուստ էր նրա թաղման հանդեսը, անքան երկար էին սուգ անում նրա համար: Հայ ժողովրդական էպոսում Սասունը Մհերի համար յոթ տարի սուգ է պահում: Մեծ սուգ է արվել Խոսրով Թագավորի, Վաչե Մամիկոնյան զորավարի, Աշոտ Բագրատունու և այլոց համար: Մասնակիորեն հրաժարվում են առօրյա, կենսականորեն անհրաժեշտ գործողություններից, սնվում են այնքան, որ պահպանեն գոյությունը, մի կողմ թողած բազմագույն զգեստները պարուրվում են սևով, թողնում են հարդարվելն ու զարդարվելը, հրաժարվում են արևի լույսից, բնակարանի լուսամուտներին անթափանց վարագույրներ կախում:

Անանուն պատմիչի նկարագրած թաղման հանդեսում հիշատակվում է մի սովորություն, որի հետքերն այսօր էլ կան հայ ժողովրդի կենցաղում: Դերենիկի եղեխաներին գրկած տանում են կոծի արարողությանը, և ամուսին-իշխանուհին, խոսելով վրեժի մասին, ձեռքը դնում է Գագիկ որդու ուսին (որը և հետագայում առնում է հոր մահվան վրեժը): Այսինքն կորցնելով ամուսնուն, այրին ապավինում է որդուն: Այժմ էլ վշտահարը կորցնելով իր տան սյունը, իր տիրոջն ու պահապանին, նեցուկ է փնտրում մերձավորների մեջ և սգո արարողության ժամանակ խոնարհվում է մեկի առաջ («աչկերը յիրա օնել»): Ագո երգը այսպես է դիմում վերջինիս.

Էրնիս մարիկ ու անես մարություն,
Էընիս հարիկ ու անես հարություն
Իմ անուշիկ խաթունին (կամ հորն) խաթերն համար[30]:

Այս ընտրյալը պարտավորվում է հոգ տանել սգվորների համար: Առավել ծանր է լինում այդպիսի նեցուկ չգտնողի վիճակը. «Մինր կա վուչ, թա աչկերս յիրա օնիմ» :

Լաց ու կոծի ուժգնության աստիճանը պայմանավորվում էր ոչ միայն մահացածի համբավի չափով, այլև նրան վիճակված մահվան բնույթով: Մանուել սպարապետը ափսոսում է, որ ինքը չի զոհվում կռվի դաշտում, այլ մահանում է վատթար մահով՝ անկողնում պառկած[31]: Երբ հայտնի է դառնում, որ Գնել իշխանը սպանվել է ոչ թե պատահաբար, այլ դարձել է խարդավանքի զոհ, ողբն ու կոծը սաստկանում են: Ողբերգական մահը ինչ-որ չափով լինելով պատահական ու անիմաստ, ավելի շատ արցունք ու կական է հարուցում, քան բնական, առավել ևս իմաստավորված մահը: Սասունցիները ռազմադաշտում ընկած մարտիկին անհուսությամբ չէին ողբում, այլ հպարտությամբ ու ակնածանքով էին հրաժեշտ տալիս նրան:

Որպեսզի հանդուցյալի հոգին հանգստանա և ուղևորվի իր մշտական կայանը, հարկ էին համարում պատշաճ ծիսակատարություններով

30 Հ. Ճ ա ն ի կ յ ա ն. նշվ. աշխ., երգ 43:
31 Փ. Բ ո ւ զ ա ն դ, V դպր., գլ. ԽԴ:

հուղարկավորել նրան: Աներևակայելի մեծ նշանակություն էր հատկացնում ժողովուրդը ծեսին: Ղևոնդ պատմիչը մահացածների նկատմամբ ընդունված արարողությունների արգելումը համարում էր ողբերգություններից մեծագույնը[2]:

Թաղումով չէր վերջանում մեռյալին մատուցվող տուրքը: Նախնիների հոգիներին գոհացնելու համար պարբերաբար ծեսեր ու զոհաբերություններ էին կատարում, գերեզմաններին վերագրում էին մոգական ուժ, հուշաքարեր էին կանգնեցնում, ամրակուռ դամբարաններ կառուցում:

Թաղման հեթանոսական արարողությունն իր սովորությունների էական համակարգով պահպանվեց քրիստոնեական միջնադարում և ծիսական որոշ տարրերով հասավ մինչև մեր օրերը: Այն իրենից ներկայացնում էր ժողովրդական համադրական (սինկրետիկ) արվեստի մի արտահայտություն՝ իր կատարողներով, մասնակիցներով ու ղեկավարներով. կազմակերպված յուրօրինակ խելահեղ խմբապարերով ու մենապարերով, սրտաճմլիկ մեներգերով, ասերգերով ու խմբերգերով, որոնք արտահայտում էին գովք ու թախանձանք, զղջման մրմունջներ ու անփարատելի վիշտ, վախ ու ակնածանք, հույս ու մխիթարություն. վինի, փանդիռի ու փողի մերթ տխուր՝ գթություն շարժող, մերթ ցասկոտ՝ չարին միտող նվագ, դիմակներով, թատերային հագուստներով ու վարսերով եղերամայրեր, փողարներ, ձայնարկուներ, կոծապարուներ: Այս ամենին միանում էին ինքնաբուխ արյունալի զոհաբերություններն ու մատաղները, լացն ու անհույս հեծեծանքը, որոնք նպատակ ունեին. ա. գոհացնել հանդուցյալի կենդանի հոգին, բ. շարժել մահվան աստծո ողորմածությունն ու հրավիրել ամենաղոր արևի ուշադրությունը, գ. դիցապաշտական մոգական գործողություններով վանել չար ուժերը, որոնք շարժուն ու կենդանի մարդուն չար հրաշքով վերածել են անշունչ ու անկարող դիակի, դ.արտահայտել մահվան առթիվ առաջացած վիշտն ու ողբերգությունը:

Քրիստոնեական եկեղեցական թաղման ծեսը պահպանեց հեթանոսականի հիմնական արարողակարգը՝ հարմարեցնելով այն քրիստոնեական ուսմունքի պահանջներին, մեկնաբանելով նորովի՝ ձայնարկուներին ու կոծադիրներին փոխարինեցին եկեղեցու սպասավորները՝ իրենց սաղմոսներով ու գանձերով, արգելվեցին միայն մարմնական ցույցերը, պարային ու թատերական տարրերը, թեև ժողովրդի կենցաղում դրանց վերապրուկները գոյություն ունեն մինչև մեր օրերը:

---

32 Ղ և ո ն դ, էջ 121: